

2017թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

«Վ մակրոտնտեսական իրավիճակը և հեռանկարները

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը
1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2017թ. - 31.12.2017թ.

Թեմայի ղեկավարը

Տիգրանյան Իշխան Տաճատի

տ.գ.թ., պրոֆեսոր

Թեմայի մասնակիցներ

1. Մկրտչյան Թաթուլ Մելսիկի – գիտաշխատող
2. Հովհաննիսյան Հայկազ Սուրենի– գիտաշխատող
3. Վարդանյան Քնարիկ Ջոնիկի-գիտաշխատող
4. Ավագյան Գայանե Արամի – գիտաշխատող
5. Տիգրանյան Վարսիկ Իշխանի –գիտաշխատող
6. Մխիթարյան Լուսինե Կարենի – գիտաշխատող
7. Մուրադյան Լուսինե Վարուժանի- գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը որակապես փոխեց տնտեսական քաղաքականությանը ներկայացվող պահանջները: Հայաստանում դա համընկավ վերականգնողական տնտեսական աճի փուլի ավարտին: Այս առումով մակրոտնտեսական իրավիճակի վերջին տարիների փոփոխությունները առանձին հետազոտության կարիք ունեն: 2017թ. շարունակվելու են նախորդ փուլերում կատարված հետազոտությունները և ավելանալու են նոր ուղղություններ, որոնք ամբողջական կդարձնեն կատարված ուսումնասիրությունները:

Քանի որ տնտեսության մեջ տարբեր գործընթացներ շղթայաբար կապված են միմյանց հետ, ապա դա հանգեցնում է բյուջեի պակասուրդի ավելացմանը, պետական պարտքի ծավալների մեծացմանը և ընդհանուր առմամբ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վատթարացմանը: Բնակչության տարբեր եկամուտներով խմբերի միջև խիստ շեղումների մեղմացումը կարող է խթանել տեղական արդյունաբերության զարգացումը, հաղթահարել աղքատության բարձր մակարդակը և վերջին հաշվով նպաստել հետագա տնտեսական աճին:

Աշխատանքի բովանդակությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ տնտեսության իրական հատվածի գերակա ոլորտներ և արտաքին հատված: Հետազոտությունների նախորդ փուլերում իրական հատվածի գերակա ոլորտներից ընտրվել էին զբոսաշրջության, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտները, որպես ՀՀ տնտեսության իրական հատվածի հեռանկարային զարգացման բնագավառներ: Ուսումնասիրվել են այս բնագավառների օրենսդրական դաշտը, բացահայտվել են ագրոզբոսաշրջության զարգացման պայմանները և հնարավորությունները հանրապետությունում, բացահայտվել են արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հեռանկարային ուղղությունները, մշակվել են միջոցառումների համալիր դրանք իրացնելու նպատակով:

Ուստի անհրաժեշտ է փաստացի հետազոտություններով հիմնավորված գործընթացների հիման վրա մշակել տնտեսական քաղաքականության բնագավառում կոնկրետ միջոցառումներ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տնտեսական քաղաքականության շատ ուղղություններ կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում ունենում են տարբեր հետևանքներ: Հետազոտությունները պետք է պարզեն նման հակասությունների օպտիմալացման պայմանները:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Տնտեսական ճգնաժամը ի հայտ է բերել նոր գլոբալ մարտահրավերներ, որոնց պայմաններում առաջ է գալիս երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարության վերանայման անհրաժեշտություն՝ հետճգնաժամային իրողություններին համապատասխան, որոնցից հիմնականներն են՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսության էականորեն փոխված ճյուղային կառուցվածքը, հետճգնաժամային տարիներին երկրի օտարերկրյա ֆինանսավորման (օտարերկրյա ուղղակի ներդրումների, մասնավոր տրանսֆերտների և պաշտոնական տրանսֆերտների զուտ հոսքի հանրագումար) ծավալների կտրուկ կրճատումը:

Նոր մարտահրավերներ է առաջ բերում այն հանգամանքը, որ մինչ այժմ տնտեսական աճը Հայաստանում, ըստ էության, չի հանգեցրել ոչ գյուղատնտեսական զբաղվածության ավելացմանը:

Նկատի ունենալով նշված միտումները և արդեն կատարված աշխատանքները 2017թ.-ին հետազոտությունները պետք է շարունակվեն նախորդ տարիներին բաց մնացած ուղղություններով:

Այդպիսի ուղղություններից է տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրը: Հաշվի առնելով, որ երկրի միջազգային մրցունակությունը հանդես է գալու որպես "Շրջանակային քաղաքականությունների" գումարային գնահատական, հետազոտության մեջ խնդիր է դրվում բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության բարելավելու հիմնական ուղիները: Այս առումով կայուն տնտեսական զարգացման ապահովման ուղղությամբ միջոցառումների մշակման նպատակով խնդիր է դրվում բացահայտել հակապարբերաշրջանային քաղաքականության արդյունավետության ինդեքս՝ ընտրված ցուցանիշների հիման վրա:

Չնայած վերջին տարիների գործարար միջավայրի բարելավմանը և պետական կարգավորումների կրճատմանն ու պարզեցմանը ուղղված բազմաթիվ միջոցառումներին, Հայաստանի դիրքերի բարելավմանը ինչպես ընդհանուր գործարար միջավայրի որակի հայտանիշով, այնպես էլ նախկինում առավել խնդրահարույց ոլորտների հայտանիշներով, օտարերկրյա ներդրումների ներհոսքի ավելացում չի

դիտարկվում: Ավելին, առանձին տարիների դրանք կրճատվում են, որը հանգեցնում է տնտեսական աճի տեմպերի դանդաղեցման:

Այդ առումով անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ոլորտում բարեփոխումների իրականացման ընթացքը, մասնավորապես այն ցուցանիշների մասով, որոնցով Հայաստանը դեռևս զբաղեցնում է ցածր դիրքեր:

ՀՀ-ում դեռևս առկա են լուրջ հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են մրցակցային քաղաքականության արդյունավետ կիրարկմանը: Դրա մասին են վկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությունը և տնտեսության համակենտրոնացման բարձր մակարդակը, որոնք խոչընդոտում են մրցակցային միջավայրի ձևավորմանն ու դրա հետագա զարգացմանը: Հետազոտությունները կշարունակվեն նաև այս ուղղություններով:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Հետազոտության ընթացքում չափազանց կարևոր է ներդրումների կրճատման պատճառների ուսումնասիրությունը և դրանց օպտիմալ կառուցվածքի հնարավորինս ճշգրտումը: Հատկապես կարևորվում են ներքին աղբյուրների հաշվին ներդրումների ընդլայնման, խնայողությունները ներդրումների վերածելու մեխանիզմների հետազոտությունները: Այդպիսի մեխանիզմների մշակումը թույլ կտա դադարեցնել կապիտալի արտահոսքը և թուլացնել տնտեսության կախվածությունը գործուսուցիչ եկամուտներից ու դրամական փոխանցումներից:

Տնտեսության արտաքին հատվածի հետազոտությունները շարունակվելու են հատկապես մակրոտնտեսական իրավիճակի վրա արտաքին ցնցումների ազդեցության բացահայտման տեսանկյունից: Դրանք իրենց արտացոլումն են գտնում փոխարժեքի տատանումներում, որն էլ իր ազդեցությունն է թողնում ընթացիկ գործառնությունների և ֆինանսական ու կապիտալի հաշիվների վրա, փոխելով վճարային հաշվեկշռում արտացոլվող ապրանքային ու ֆինանսական հոսքերը:

Նշված հիմնախնդիրները կուսումնասիրվեն հետազոտության տարբեր փաթիլներում, որը հնարավորություն կտա ճշգրտումներ մտցնել մշակվող տնտեսական քաղաքականության մեջ՝ հաշվի առնելով առավել մեծ վտանգներն ու ռիսկերը:

Հետազոտության արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված մենագրություն, գիտական հոդվածներ, զեկուցումներ գիտաժողովներում և սեմինարներ: